ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Չարենցավանի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար **նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/1>> ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում **2019 թվականի փետրվարի 28-ին** կնքված N <<ՉՀ-ԳՀԱՇՁԲ-19/1>> պայմանագրում **2019 թվականի մարտի 14-ին** կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ: Պայմանագրով սահմանվել է, որ աշխատանքների կատարումն իրականացվելու է մինչև 2019 թվականի մարտի 15-ը, սակայն անհրաժեշտություն է առաջացել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել:

Փոփոխության նկարագրություն: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է և կողմերի միջև կնքվել է համապատասխան համաձայնագիր:

Փոփոխության հիմնավորում: ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետ:

Պատվիրատու՝ **Չարենցավանի համայնքապետարան**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

28.02.2019թ. կնքված N <<ՁՀ-ԳՀԱՇՁԲ-19/1>> գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Չարենցավան <<14>> 03 2019թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար **Հ. Կ. Շահգալդյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գ. Ավագյանի**, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 28.02.2019թ. կնքված N <<ՁՀ-ԳՀԱՇՁԲ-19/1>> գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5-րդ, 7.6-րդ կետերը, <<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ-ի կողմից 13.03.2019թ.-ին ներկայացրած թիվ 04 գրությունը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգել և սահմանել մինչև 2019 թվականի մարտի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>	<<ԿԱՏԱՐՈՂ>>
Չարենցավան համայնք	**<<Էմ Ջի դիզայն>> ՍՊԸ**
ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան	**ք. Երևան, Բաղյան 1 նրբ., 6/6**
հրապարակ թիվ 1	**<<Հայէկոնոմբանկ>> ԲԲԸ**
ՀՀ ՖՆ ԳՎ	**Հ/Հ 163518011545**
Հ/Հ 900132173015	**ՀՎՀՀ 00883641**
ՀՎՀՀ 03022497	**էլ. փոստ՝ mgdesign19@gmail.com**
	Հեռ. 093-13-06-21
Համայնքի ղեկավար՝	**Տնօրեն՝ Գ. Ավագյան**
Հ. Կ. Շահգալդյան	
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ	Կ.Տ